



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գրադարան «Աշխատավար»-ի № 3.

Վ. ԽՈՐԷՆԻ

Ի Ն Չ Է

Ս Ո Ց Ի Ա Լ Ի Չ Մ Ը

3

Թիֆլիս

Տպարան «Մամուլ»

1917



15-669-72

ԻՆՉ Է ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

I

Սոցիալիզմ եւ կապիտալիզմ

Այժմ բոլորն էլ սոցիալիզմից են խօսում, բայց քչերը գիտեն՝ թէ իսկապէս ինչ բան է սոցիալիզմը:

Սոցիալիզմը մի բան է, որ գեռ չկայ, յետոյ պէտք է լինի: Դա մի նոր տեսակի հասարակական կեանք է, որ այժմ եղածի միանգամայն հակառակը պէտք է լինի: Հիմա գիտենք, որ ամեն ինչ մասնաւոր սեփականութիւն է, մարդիկ անհաւասար են: Ոմանք ազատ ման են գալիս իրանց համար, ոչինչ չեն անում, բայց ամեն բանից առաջ

տօրէն օգտուում են: Ընդհակառակը շատերն էլ, մարդկանց մեծ մասը օրնիբուն աշխատում է, շարշարում, բայց կիսաքաղց մնում:

Ուրեմն մարդկանց մեծ մասը աշխատում է, իսկ մի փոքր մասը վայելում: Սրա պատճառն այն է, որ մարդկանց մի մասը հողի, փողի և գործարանների տէր են դարձել, իրենց մասնաւոր սեփականութիւնն են համարում և դրանցով շահագործում աղքատներին: Սոցիալիզմը ասում է, որ դա անարդար բան է, որ մասնաւոր սեփականութիւնը յափշտակութիւն ու գողութիւն է, որ ամեն շարիք ու դժբախտութիւն դրանից է առաջ գալիս: Սոցիալիստները ասում են, որ պէտք է ամեն ինչ համայնական — ընկերական անել. մարդիկ առաջւայ պէս, ինչպէս հաւատար ընկերներ միասին կաշխատեն, միասին տէրութիւն

կանեն և միասին էլ կվայելեն: Ամեն
մարդ իրա աշխատանքի տէրը կլինի,
ազատ ու երջանիկ կապրի, ոչ ոք
միւսին չի շահագործի, այսինքն կլինի
կատարեալ «ազատութիւն, հաւասար-
ութիւն և եղբայրութիւն»: Այսպիսի
կեանքին են առում սոցիալիստական
կեանք, կամ այդպիսի ազատ, հաւա-
սար ու եղբայրական հասարակութեանը
— սոցիալիստական հասարակութիւն:

Հիմա տեսնենք՝ այդպիսի բան եղել
է կամ լինելու բան է: Եթէ մարդիկ
առաջ էլ այդպէս¹ ապրած լինէին՝ գուցէ
յետոյ էլ կարողանան այդպէս հաւասար
ու ընկերովի ապրել: Կամ գուցէ հենց
հիմա մարդկանց կեանքն ու աշխա-
տանքն այնպէս է, որ եթէ որոշ բաներ
փոխենք՝ կարելի կլինի սոցիալիստական
կեանք հաստատել:

Տեսնենք՝ ինչ է ասում այդ մասին
մարդկային պատմութիւնը:

Պատմութիւնը մեզ ասում է, որ
մարդիկ սկզբում ապրել են ճիշտ և
ճիշտ վայրի գազանների կամ վայրե-
նիների նման: Ոչ վարել, ոչ ցանել,
ոչ աշխատել կար: Որոշ անելով էին
ապրում: Ինչ ճարում էին՝ էն էլ ու-
տում էին, ինչպէս կենդանիները:
Մասնաւոր սեփականութիւն ասած
բան չկար:

Բայց այսպէս երկար չմնաց: Կարիքը
օտիպեց մարդկանց աշխատելու Մարդիկ
սկսեցին անասնապահութեամբ, յետոյ
էլ երկրագործութեամբ պարապել:
Բայց էլի մասնաւոր սեփականութիւն
չկար. հողը, անտառներն ու դաշտերը
ամբողջ համայնքի կամ ցեղի ընդհա-
նուր կամ համայնական սեփականու-
թիւնն էր: «Իմ» ու «քո» չկար: Էդ
հին ժամանակներում ամբողջ համայն-

Քը միասին աշխատում՝ միասին էլ
տէրութիւն էր անում: Ամեն մարդ
օգտուում էր համայնքի հարստութիւ-
նից որքան կարիք ունէր: Ուրեմն հո-
ղը—անտառներն ու դաշտերը ամբողջ
համայնքի սեփականութիւնն էր, աշ-
խատանքն ու վայելքն էլ համայնական
էր: Ի հարկէ այդ ժամանակ կեանքն ու
աշխատանքը շատ էին պարզ, հասարակ:
Դրա համար էլ այդ կեանքին ասում են
նախնական (կամ պրիմիտիւ) համայ-
նական կեանք, այսինքն պարզ, հասա-
րակ ընկերական ու հաւասար կեանք:
(Դա կոչւում է նաև երոպական խօս-
քով պրիմիտիւ կոմմունիզմ—համայնա-
կանութիւն): Ի հարկէ սոցիալիզմը
կամ սոցիալիստական կեանքն աւելի
բարձր բան է:

Յետոյ, ի հարկէ, այդպէս չՖնաց-
քանի դնաց մարդկանց կեանքը փոխ-
ւեց: Ինչի մարդկանց պահանջները

աւելացան, այնքան նրանց կեանքը
զարգացաւ ու բարգացաւ: Առաջ եկան
արհեստներ ու արհեստաւորներ: Մարդ-
կանց աշխատանքը բաժանուեց. հիմա
էլ ամեն մարդ ամեն բան իր համար
առաջւայ նման շինել չի կարող:
Աշխատանքի հետ բաժանուեց և հասար-
ակութիւնը. առաջ եկան դասակար-
գեր — հարուստներ և աղքատներ, հո-
ղատէրեր (յետոյ էլ նաև փողատէրեր)
և հողազուրկներ, ասրուկներ և այլն:
Ո ժողները խլեցին թոյլերից հողը,
տիրացան երկրին, ժողովրդի մեծ մա-
սին իրենց սարուկը կամ ճորտը դար-
ձրին: Իրենք դարձան տէրեր կամ աղ-
նւակաւաններ, այսինքն ազնիւ, լաւ մար-
դիկ, միացան նոյնպէս հողատէր հո-
ղւորակաւանների հետ և կազմեցին մի
ուժեղ կալւածատէր կամ հողատէր
դասակարգ: Յետոյ այդ աղնւակաւաններն
ու զինւորակաւանները դարձան մեծ ու

փոքր իշխաններ ու թագաւորներ և
ժողովրդին ամեն կերպ նեղեցին ու
ճնշեցին: Միջինաւոր ժողովուրդը
աշխատում էր, իսկ այդ մի խումբ
մարդիկ վայելում էին: Առաջ դրանք
ժողովրդին ստրուկներ դարձրին, յե-
տոյ էլ ճորտեր: Հին դարում ստրկու-
թիւնն էր սովորական բան, միջին դա-
րում՝ ճորտութիւնը: Հիմա էլ ստրուկ,
աղքատ մարդկանց «բանւոր» են ա-
սում: Բայց դրանց միայն անունն է
փոխւել: Իսկապէս ամեն ինչ նոյնն է
մնացել: Եւ մարդկանց մի մասը աշ-
խատում է, իսկ մի մասը, մի փոքրիկ
մասը վայելում: Եւ այդ անարդարու-
թիւնը կմնայ, քանի որ ամեն ինչ մաս-
նաւոր սեփականութիւնն էլինի:

Ճիշտ է, 16-րդ դարից սկսած շատ
երկրներում դիւղացիներն էլ ճորտեր
չեն (—Ռուսաստանում ճորտութիւնը
վերացաւ 1861 թ.—), բայց էլի

ստրուկ են, որովհետև նրանք հողից ու
աշխատանքից — սեփականութիւնից
զուրկ են: Իսկ առանց դրան մարդիկ
որքան էլ ճազատու կոչւեն, ստրուկ
կմնան: Քաղցած մարդը չի կարող ազատ
լինել: Քաղցը կատիպէ նրան սրտ կամ
նրա ստրուկը դառնալ, աշխատել նրա
համար, որպէսզի մի կերպ կարողանայ
իր գոյութիւնը պահել:

Եւ մենք տեսնում ենք, որ 16-րդ,
մանաւանդ 19-րդ դարի սկզբից մի
մեծ փոփոխութիւն է կատարւում
մարդկանց կեանքում: Ճիշտ է, մար-
դիկ ազատւում են ճորտութիւնից և
քաղաքական ստրկութիւնից, ստանում
են քաղաքացու իրաւունքներ և ազա-
տութիւններ, դառնում են, այսինքն
կոչւում են ազատ քաղաքացիներ,
բայց դրանք անուշտով են միայն ա-
զատ, իսկապէս ստրուկ են: Ճորտն
ու ստրուկը դառնում են ազատ քանւոր,

գիւղացի, բայց առանց իրենց աշխատանքի տէրը վնելու: Երանց աշխատանքի տէրը հողատէրը կամ փողատէրն է: Սրանք էլ իրենց հողի, փողի և իշխանութեան ուժով ամեն կերպ շահագործում են «ազատ» բանւորին ու գիւղացուն և դրանց աշխատանքով ահագին հարստութիւններ դիպում: Բանւորները դառնում են սեփականազուրկ (սրտը հտարիատ), իսկ գիւղացիները՝ հողազուրկ կամ շատ սակաւահող: Սրանք կազմում են աշխատաւոր դասակարգը, իսկ դրանց դիմաց կանգնած են այժմ փողատէր (կապիտալիստ) վաճառականներն ու գործարանատէրերը և հողատէր ազնւականութիւնն ու հողւորականութիւնը:

Այսպիսով հասարակութիւնը իսկապէս բաժանւած է երկու մեծ հակառակ բանակների կամ դասակարգների:

մի կողմը կանգնած է աշխատաւոր,
աղքատ մեծամասնութիւնը, իսկ միւս
կողմը կանգնած է ոչ աշխատող, հա-
րուստ փոքրամասնութիւնը: Դրանց
շահերը միանգամայն տարբեր ու հա-
կաւակ են իրար: Դրա համար էլ դը-
րանց մէջ առաջ է եկել կատարի դա-
սակարգային կռիւ: Դասակարգերից
կազմւած այս հասարակութիւնը կոչ-
ւում է դասակարգային հասարակու-
թիւն: Եւ որովհետեւ գլխաւոր շահա-
գործող ու ճնշող դասակարգը «քաղա-
քացի» (բուրժուա) փողատէր (կապի-
տալիստ) դասակարգն է, դրա համար
էլ մեր դասակարգային հասարակու-
թիւնը կոչւում է բուրժուական կամ
կապիտալիստական հասարակութիւն:
Իսկ դրանց տնտեսական ու քաղաքա-
կան կեանքն ու իշխանութիւնը կոչ-
ւում է կապիտալիզմ, այսինքն խոշոր
դրամագլխի (կապիտալի) տնտեսութիւն
և իշխանութիւն:

II

Կապիտալիզմ կամ կապիտալիստա-
կան հասարակութիւն:

Կապիտալիստական հասարակութեան
հիմքը մասնաւոր սեփականութիւնն է:
Ինչ որ առաջ է դառնում ուրիշների աշ-
խատանքի շահագործումով: Որքան կերպ
մի քիչ դրամագլուխ ձեռք բերողնե-
րը կամ ժառանգողները սկսում են աշ-
խատնոցնել ուրիշներին գործարաննե-
րում, դաշտերում ու անասնաբուծու-
թանքում և հարստանալ նրանց հաշիւն:
Նրանք հարստանում են քիչ վճարելով
չափ ստանալով: Եթէ, օրինակ, բանւո-
րին տալիս են 2 բուրջի, ուրեմն 2
բուրջուց աւել են ստանում նրա աշ-
խատանքից. այդ աւելորդը նրանց շահն
է: Ուրեմն դրամագլուխ ունեցողը հա-
րստանում է բանւորին աւել աշխա-
տնոցնելով, բայց քիչ վճարելով: Նրա

օգուտը այդ աւելորդ աշխատանքից
ստացած աւել փողն է: (Դրան ասում
են «յաւելեալ աշխատանքից» «յաւե-
լեալ օրժէք» ստանալ): Այդպիսի օ-
գուտ տւող կամ շահագործող գրամա-
զլուխը կոչւում է «կապիտալ»: Իսկ
կապիտալի տէրը «կապիտալիստ» (կամ
բուրժուա):

Ուրեմն կապիտալիստների դասա-
կարգը կամ բուրժուազիան շահագոր-
ծողների դասակարգն է: Նրանք իրենց
«սրբութիւն սրբոց» համարած մասնա-
ւոր սեփականութիւնը, այսինքն գոր-
ծարաններն ու մեքենաները, հողերն
ու տները և այլն ձեռք են բերել փող
և հազ չունեցող աշխատաւոր ժողովրդ-
դին շահագործելով, նրանց արիւն-քրք-
տինքը քամելով: Նրանք, իհարկէ, ի-
րենց արդար, անմեղ են համարում:
Բայց պարզ է, որ ոչ ոք միմիայն
իր սեփական աշխատանքով միլիոն

ների ու հազարների տէր չի դառնում,
ու՞ր մնաց առանց աշխատանքի: Կաս-
կած չկայ, որ մեծ հարստութիւնները —
կապիտալները տղրուկի և արիւնածա-
րաւ վամպիրի նման ուռչում, մեծա-
նում են բանւորների ու գիւղացիների
աշխատանքի, կեանքի հիւթերը ծծե-
լով:

Կապիտալիստները այսպէս են արդա-
րանում. — Բանւորն էլ է ազատ մարդ,
ես էլ: Ես փող ունեմ, նա ձեռքեր,
աշխատելու ոյժ: Ես գործ եմ սկսում,
գնում եմ շուկայ և աշխատողներ եմ
ուզում վարձել: Ազատ քաղաքացի
բանւորը ազատ կամքով գալիս վար-
ձւում է, ես էլ վարձում, գնում եմ
նրա աշխատանքի ոյժը: Ճիշտ է, այս-
պէս է լինում, բայց այդ ցոյց է տա-
լիս, որ ազատութիւնը դատարկ խօսք
է, երբ մարդ քաղցած է, նիւթապէս
անապահով է: Այժմեան բանւորը

անորուկ կամ ճորտ չէ, բայց նա անըր-
կանում է կապիտալիստին, երբ վար-
ձւում է նրա համար աշխատելու: Այդ
ծրւանից վերջանում է նրա ազատու-
թիւնը և սկսում է ստրկութիւնը:
Գործարան մտնող բանւորը ասում է.
Մնա բարև ազատութիւն. դու սովա-
ծի համար չես, և դառնում է կապի-
տալիստի կատարեալ ստրուկը: Գապի-
տալը քամում է աշխատանքի հիւթերը
և ի վերջոյ հիւանդ, անոյժ կամ հաշ-
մանգամ փողոց շարտում նրան:

Ներկայ արտաքուստ գեղեցիկ գոր-
ծարանները մի մի գերեզմաններ են:
Հազարաւոր տղամարդիկ ու երեխա-
ներ կոտորւում, ոչնչանում են այդտեղ:
Իսկ մի կատարեալ սպանդանոց է, մի
«խաղաղ» ամենօրեայ պատերազմ է,
ուր մարդիկ կոտորւում են կամաց-կա-
կամաց, սուս ու փուս: Շատերը հաշ-
մանգամ են դառնում, շատերը թո-

քախտից մեռնում, կանայք անբարո-
յականում և երեխաները այլակրում ու
ճանճերի նման կոտորում: Կենդանի
մնացողներն էլ կորցնում էին իրենց
մարդկային կերպարանքը. այլանդակ-
ւում Ֆիզիքապէս ու բարոյապէս—
«անմարդանում»:

Ահա թէ ինչպէս է նկարագրում վար-
ձու բանւորների դրութիւնը և կապի-
տալի շահագործելու եղանակները լաւ
ուսումնասիրած, «դիտական սոցիալիզ-
մի» հիմնադիր Կ. Մարքսը.— «Ազատ»,
բայց վարձու բանւորը «իր սեփական
կաշին է ծախու հանում շուկայում»,
երբ վարձելու է գնում: Կապիտալիս-
տը իր «կապիտալային հոգով», այս-
ինքն ծծելու, կեղեքելու ախորժակով
է մօտենում նրան. — «Կապիտալի միակ
կենսական ձգտումը այն է, որ աւե-
լացնի իր շահը, «յաւելեալ արժէք»
ստեղծի, որքան կարելի է շատ «յաւե-

չեալ աշխատանք» ծծի արդիւնագործութեան միջոցներով և իր բաժինով: Կապիտալը—դա մեռած աշխատանքն է, որ արիւնուուշտ վամպիր հրէշի նըման կենդանանում է կենդանի աշխատանք ծծելով և այնքան է ուժեղանում որքան շատ է ծծում այդ աշխատանքից»:

Շահագործող կապիտալիստը ասում է իր առաջ կանգնած «ազատ» բանւորին. — «Իսկ իմ ապրանքն ես հիմա. քո մէջ սիրտ չկայ և եթէ քեզ թւում է՝ թէ քո մէջ մի բան շարժում, բարակում է, այդ միայն իմ սրտի բարակումն է, որ դողում է իմ ապրանքի ու շահի համար: Իսկ իմ ապրանքն ու մեքենան ես. աւելին. դու իմ անկեանք մեքենայի մի կենդանի մասնիկն ես, դու «կէս-մարդ» ես, ինչ ուզեմ կարող եմ քեզ հետ անել: Իսկ ես ծառայում ինձ և իմ մեքենային և ոչ թէ

մեքենան քեզ: Ճիշտ է, դու ես գործիքներ ու մեքենաներ ստեղծում, բայց գործիքներն են քո տէրը, նրանք են քեզ վրայ իշխում և ոչ թէ դու նրանց վրայ: Այդպէս՝ դու մի իր, մի ապրանք ես և ոչ աւելի»:

Այսպէս է կապիտալը մեծանում, այսինքն շահագործում աշխատանքը, մարդը կապիտալիստական հասարակութեան մէջ այնպէս է շահագործում մարդուն, որի նմանը մարդկութիւնը չի տեսել: Կապիտալը մի կողմից անթիւ զոհեր է խլում, միւս կողմից, անգործների բանակներ կազմում: Ոսկու դէզերը կիտում են աղքատութեան ու համատարած թշւառութեան մէջ: Ամենածայրայեղ, հէքեաթային հարըստութեան կողքին փուլում է ամենաանուանելի աղքատութիւնը: Մէկը գոյանում է միւսից: Այս է կապիտալիստական հասարակութեան հիմնական

օրէնքը:— Այդ օրէնքը այնպէս է մեխում բանւորին կապիտալին, ինչպէս Հեփեստոսը *) մեխում էր Պրոմէթէասին ժայռին: Այդ օրէնքը ցոյց է տալիս, որ հարստութեան զիզելը համապատասխանում է աղքատութեան շատութեան: Երբ հարստութիւնը զիզւում է մի բեւեռում, միևնոյն ժամանակ միւս բեւեռում, այսինքն իր սեփական աշխատանքի արդիւնքը կապիտալ դարձնող զառակարդի մէջ զիզւում են թշուառութիւնը, տանջանքը, սարկութիւնը, տրդիտութիւնը, կոպտութիւնը և բարոյա-

*) Հեփեստոսը ըստ յունաց աւանդութեան դարբնութեան ասուածն էր, որ հայր աստու՝ Զևսի հրամանով կովկասեան ժայռերին էր մեխել երկնքից մարդկանց համար կրակ գողացող և մարդկանց օգտակար արհեստներ սովորեցնող Պրոմէթէասին: Պրոմէթէասի տանջանքը վերջ չունէր: Անշղերը կրժում էին նրա թոքերը, բայց դրանք էլ միշտ աճում էին: Գ. Խ.

կան անկումը»։ Ստեղծում է մի կատա-
րեալ «բարբարոսութիւն քաղաքա-
կրթութեան մէջ» *)։

Ահա թէ ինչպէս են մարդիկ հարգա-
տանում։ Նրանք հարստանում են նրա-
նով, որ աշխատաւորները իրենց աշ-
խատանքի արդիւնքի հետ ծախում են
և «իրենց երեխաներին ու կանանց»։
Կապիտալիստների դատակարար իրենց
«մանատր» սեփականութիւն համա-
րած «աւրբ» հարստութեանը տանում
են աշխատի անտրբ, անարդար մի
ընկերով։ Իսկ իսկապէս չափազանց
թիւն, օրինաւոր գողութիւն է ընդհա-
նուրի կամ հասարակութեան աշխա-
տանքի արդիւնքի։ Ամբողջ աշխատա-
ւոր հասարակութեանը աշխատում է,
իսկ մի խումբ մարդիկ տիրում են։

*) Կ. Մարքս. «Կապիտալ», սուս. թարգմ.
I հատ եր. 129, 185, 313, 346-347, 369, 517
369-572։

Ուրեմն կապիտալիստների մասնաւոր
սեփականութիւնը համայնական կամ
հասարակական հարատու թիւնն է իսկա-
պէս: Ուստի և միանգամայն արդարա-
ցի կլինէր, եթէ հարատու թիւնն ատեղ-
ժողները իրենք էլ տէր դառնային ի-
րենց աշխատանքին, այսինքն հասարա-
կական հարատու թիւնը դառնար հասա-
րակութեան սեփականութիւն:

Դա մի շատ արդար բան կլինէր:
Աշխատաւորը իր աշխատանքի տէրը
կլինէր: Կապիտալիստական մասնաւոր
սեփականութիւնը կվերանար և դրա
տեղ համայնական սեփականութիւն կը-
հաստատուէր:

Դրան է ձգտում Սոցիալիզմը:

Սոցիալիզմ կամ սոցիալիստական
հասարակութիւն

—

Սոցիալիզմը ծնունդ առնում է կապիտալիզմից: Կապիտալիստական հասարակութիւնը իր ներքին ձգտումներով տանում է մեզ դէպի սոցիալիստական հասարակութիւնը: Մասնաւոր սեփականութեան և ուրիշի աշխատանքի շահագործման վրայ հիմնւած հասարակական կարգն ինքը նոր համայնատիրական ու ընկերավար հասարակութեան հիմքերն ու պայմաններն է ստեղծում:

Կապիտալիստական «ապրանքային» արդիւնագործութիւնը իր էութեամբ և ծայր աստիճանի զարգացմամբ հակասում և ներհակում է թէ տնտեսական, թէ կուլտուրական և թէ մեր բարոյական-հոգեկան զարգացման: Տնտեսութեան այդ եղանակը իր գերարտա-

դրութեամբ, այսինքն աւելի արաս-
դրելով քան մարդիկ իրենց տնտեսա-
կան: դրութեամբ սպառել կարող են և
դրա հետեանք տնտեսական ճգնաժա-
մերով ամենից առաջ խոչընդոտ է
հանդիսանում տնտեսական անարդել
զարգացման: Այդպիսով դա հիւանդա-
դին աններդաշնակութիւններ ու հիւ-
նական հակասութիւններ է, մայնում
մեր ամբողջ կուլտուրական կեանքի
մէջ: Ապրանքային տնտեսութեան ան-
հաշիւ արդիւնադրութեան և աննոր-
մալ բաշխման արդիւնքն այն է լինում,
որ դա որոշ չափով նաև հակակուլ-
տուրական երևոյթ է դառնում, հակա-
սում է ամբողջ մարդկութեան ազատ
ու հաւասար զարգացման: Էսպէս
կուլտուրական երևոյթ կայիտալիզմը
դառնում է յարաբերօրէն յառաջադի-
մական (սրտզրէտօր): Նա, զբաղաբա-
կըրթութեան մէջ բարբարոսութիւն է

անդժուս. — մարդկութեան չնչին փոք-
րամասնութեան կուլտուրական կեան-
քը հիմնուած է մարդկութեան մեծա-
մասնութեան յետադիմութեան, այլա-
սերման և թշառութեան վրայ:

Եւ այս հակասական երևոյթք բոլորւմ
է կապիտալիստական ասպրանքային
անասութեան էութիւնից, նրա ներ-
քին ու հիմնական հակասութիւնից:
Հակասութիւնը նրա մէջ է, որ կա-
պիտալիզմը ասպրանքներ արդիւնադուր-
ծում է ոչ թէ արդիւնադուրծողներին
կարիքներին, այլ անկարի, ճակատու,
հարստանալու համար: Կապիտալիստը
նկատի չունի մարդկանց կարիքները,
ասպրանքային ու անհրաժեշտութիւ-
նը, այլ իր շահը: Եւ արդիւնադուր-
ծում է միմիայն հարստանալու համար:
Ուրի տեսակէտ և նպատակ նա չի հա-
նաչում: Եւ հարստանալու անտեսանելան
հիմունքներով ու հոգեբանութեամբ:

Նա մի տեսակ ինքնամոռացութեան ու
արբեցման մէջ ընկած արդիւնագոր-
ծութիւնը, ապրանքների ու տոկոսների
բազմապատկումը դարձնում է մի ինք-
նանպատակ բան: Նա «արդիւնագոր-
ծում է արդիւնագործութեան համար»: Այս է պահանջում կապիտալի էութիւ-
նը, դրա զարգանալու օրէնքը և կապի-
տալիստի «կապիտալային հոգին»:

Եւ հետևանքը լինում է մարդկու-
թեան մեծամասնութեան թշուառա-
ցումն ու յետադիմութիւնը: Ստեղծած
կուլտուրան չի ծառայում մարդկու-
թեան բարեկեցութեան: Ծախելու, հա-
րստանալու և ոչ ստեղծողների կարիք-
ների համար ստեղծած բարիքները
դառնում են չարիքներ:

Այս հակասական դրութեան և հակա-
կուլտուրական երևոյթի պատճառն
այն է, որ ապրանքները արտադրող-
ների սեփական կարիքների համար չեն

արտագրւում, որ աշխատաւորը բաժան-
ւած, գրկւած է իր աշխատանքի ար-
դիւնքից: Վերացնել այս հակասութիւ-
նը՝ — աշխատաւորին միացնել նորից
իր աշխատանքի արդիւնքի հետ, նրան
իր աշխատանքի կատարեալ տէրը
դարձնել — ահա Սոցիալիզմի նպա-
տակը:

Սոցիալիզմը ձգտում է տիրող ապ-
րանքային արդիւնագործութիւնը դար-
ձնել համայնական արդիւնագործու-
թիւն արդիւնագործողների սեփական
կարիքների կամ սպառման համար: Նա
կամենում է աշխատանքի վրայ հաս-
տատել աշխատաւորի իրաւունքը: Նա
կամենում է աշխատանքը ազատել
կապիտալի շահագործումից:

Սոցիալիզմի տիրապետութիւնը աշ-
խատանքի ազատութիւնն է նշանա-
կում ամեն տեսակ շահագործումներից
ու ճնշումներից: Խորապէս համոզւած,

որ ըտլոր շարիքների արմատը կապի-
տալիզմը, շահագործող մասնաւոր սե-
փականութեան կարգն է, սոցիալիստ-
ները ձգտում են վերացնել այդ հիմնա-
կան շարիքը՝ նրանք գիտեն, տեսնում
են իրական կեանքում, որ քանի ըմտա-
նաւոր սեփականութիւնը՝ գոյութիւն
կունենայ՝ գոյութիւն կունենան և
շահագործումն ու նսշումը։ Ուստի նը-
րանց դիտաւոր նպատակն է վերացնել
արդիւնագործութեան միջոցների — մե-
քենաների, գործարանների, հողի և
այլն մասնաւոր սեփականութիւնը, առ-
կարի և հարստացման համար ապ-
րամքների արդիւնագործութիւնը փո-
խել համայնական արդիւնագործութեան
համայնքի կարիքների և բարեկեցու-
թեան համար։

Այս դժւար և սնննարին բան չի լի-
նի, որովհետեւ կապիտալիստական արե-
տեսութիւնը ինքը արդէն արդիւնա-

գործութեամբ համայնական, հասարակական է. մեռմ է միայն դրա տիրութիւնն ու բախշումն էլ դարձնել համայնական: Սկիզբակա՞նութեան համայնացումը սոցիալ-տնտեսական եզրակացութիւնն է արդիւնագործութեան հաւաքական բնոյթի: Դա ոչ միայն ցանկալի է, ոչ միայն կուլտուրայի ու բարոյականութեան — արդարութեան պահանջ է, այլ և սոցիալ-տնտեսական անհրաժեշտութիւն է: Ուրեմն սոցիալիստական տնտեսութիւնը և անհասարակ սոցիալիստական հասարակական կեանքի տիրապետութիւնը թէ կուլտուրական ու տնտեսական տեսակէտից անհրաժեշտ ու հնարաւոր է և թէ բարոյապէս ցանկալի: Սոցիալիզմի թագաւորութիւնը թէ կուլտուր-տնտեսական և թէ պատմական անհրաժեշտութիւն է: Մեր կուլտուրական յառաջադիմութիւնը, մեր կուլտուրայի ներ-

գաշնակութեան ու առողջութեան հարցը կախուած է սոցիալիզմի տիրապետութիւնից: Միայն սոցիալիզմը, կուլտուրայի սոցիալիստական վերածնունդը, հասարակական կեանքի հիմնական բարեփոխութիւնը սոցիալիստական ըսկզբունքներով—միայն այդ կարող է փրկել մեր կուլտուրան կործանումից:

Իսկ ի՞նչ միջոցներով, ի՞նչ ուժերով կարելի է այդպէս հիմնովին բարեփոխել—յիպստիսել հասարակական կեանքը: Ինչպէս պէտք է հասնել այդ ցանկալի նպատակին, իսկական ազատութեան, հաւասարութեան ու եղբայրութեան թագաւորութեան:

Մարդկութիւնը միշտ էլ ունեցել է ազատ, հաւասար ու եղբայրացած մարդկութեան—երջանկացած մարդկութեան իդէալը: Բայց մարդկութիւնը միայն լաւ չէ ընթանել գրան հասնելու միջոցները: Որովհետեւ հասարակական-

տնտեսական կեանքում այդ իդէալի
իրականացման համար դրական պայ-
մաններ չկային՝ մարդիկ այդ երազել
են կամ աշխարհից և մարդկային կեան-
քից դուրս—հանդերձեալներում, (կրօ-
նական երանութեան իդէալը, Աստուծոյ
և սիրոյ թագաւորութիւնը «այն աշ-
խարհում»), կամ՝ այդ երևակայել են այս
աշխարհում, ըայց մարդկային կեանքի
և պատմութեան սկզբում (օր.՝ մովսի-
սական և քրիստոնէական դրախտի դա-
դափարը). կամ էլ—հասարակական
կեանքից դուրս—նախնական բնական
վիճակում: (օր.՝ Ռուսսօն):

Երեք դէպքում էլ մարդիկ սխալւել
են երեք դէպքում էլ նրանց իդէալը
եղել է ոչ իրական, այլ ցնորական,
երազական:

Մարդկութեան երջանիկ վիճակը, «ու-
կեղարք» նրանք փնտրել են անցեա-
լում կամ հանդերձեալում: Մարդկու-

Թեան երջանկութիւնը—«դրախտը» ե-
ղել է «կորուսեալ» կամ հարցականս
Բայց մարդկութեան երջանկութիւնը
երկրային, իրական և ասպագայի իդէալ
է: Իսկ ոչ թէ մարդկութեան անցեա-
լում կամ հանդերձեալում, այլ ասպա-
գայում պէտք է որոնել: Իրախտը—
ոսկեդարը ոչ թէ եղել ու անցել է, այլ
պէտք է գայ: Մենք դիմում ենք դէպի
մարդկութեան ոսկեդարը—դէպի Սո-
ցիալիզմի, դէպի Սիրոյ և Մարդու
Թաղաւորութիւնը:

Բացի այս կրօնական ու բարոյական
երազոտներից՝ եղել են և այլ երազող-
ներ: Սրանք հասարակական երազողներ
էին: Իրանք դրախտային վիճակը կամ
սոցիալիստական հասարակական կեան-
քը երևակայում էին այս աշխարհում,
բայց չէին հասկանում թէ ինչպէս
պէտք է հասնել դրան: Նրանք կամ
այդ երազում էին ինչ որ մի չնաշ-

խարհիկ կղզում, որ թօմաս Մօրի սո-
ցիալիստական կղզին—Ուտոպիան, որ
«ոչ մի տեղ» էր («ուտոպիա» բառացի
այդ էլ նշանակում է)։ այդ մի գեղե-
ցիկ ցնորք էր, որ սաւառնում էր ա-
մեն տեղ, մի անհող երազ ժարդկանց
երևակայութեան մէջ։ Կամ էլ, յետա-
գայում, մի քիչ աւելի գործնականե-
րը աշխատում էին անհատական մաս-
նակի փորձերով—գործարաններ հիմ-
նելով և այլն սոցիալիստական կեանք
հաստատել աշխարհում։ Իսկ աւելի
միամիտները սպասում, հաւատում և
յոյս ունէին, որ միլիոնատէրերը կը-
հասկանան իրենց բարի և բարեպաշտ
ցանկութիւնները և իրենց միլիոնները
կտրամագրեն նրանց Սոցիալիզը իրա-
կանացնելու համար։

Բայց այս գեղեցիկ երազների ու
հեքիաթային ծրագիրների վերջում
սոցիալիզմի «երեք ոսկէ խնձորները»

երկնքից չընկան: Ճիշտ է, յուսացողներն
ու հաւատացողները, միամիտներն ու
երագողները երջանիկ ու երանելի են,
բայց նրանք «միայն» երկնային թա-
գաւորութիւնն են գտնում և ոչ նաև
երկրային: Հասարակական կեանքը չի
կարելի յեղափոխել ոչ գեղեցիկ երագ-
ներով, ոչ էլ անհատական, մասնակի
փորձերով, որքան դրանք գաղափա-
րական ու գեղեցիկ լինեն:

Այս երագական (ուտոպիստական),
անհող ու անհիմն սոցիալիզմին այժմ
չնորհիւ կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հա-
կադրում է իրական և յեղափոխական
սոցիալիզմը, որ կանգնում է հասարա-
կական—դասակարգային տեսակէտի
վրայ: Իրական սոցիալիզմը համոզւած
է, որ միմիայն դասակարգային հետևո-
ղական կուռով կարելի է յեղափոխել
ու բարեփոխել դասակարգային հասա-
րակութիւնը: Դասակարգային կուռն է

դիտուում այժմ իբրև ամենաարմատա-
կան միջոցը վերջ տալու շահագործող
դասակարգերի տիրապետութեան և սո-
ցիալիստական կարգեր հաստատելու :
Իսկ դրա համար անհրաժեշտ է համար-
ւում հենց կապիտալիստական հասար-
ակութեան ծնունդ սեփականազուրկ
դասակարգի—պրոլետարիատի կազմա-
կերպումն ու դասակարգային դիտակ-
ցութեան բերելը :

Բայց այս «մարքսեան» սոցիալիզմն
էլ մի մեծ սխալի մէջ է ընկել : Դա
էլ պատմականորէն ու բնականորէն
չկարողացաւ միանգամից ամբողջական
(ինտեգրալ) և դրական (պոզիտիւ) սո-
ցիալիզմի տեսակէտի վրայ կանգնել :
Միակողմանի մատերիալիստական տե-
սակէտը թոյլ չտուեց ճիշտ կերպով գնա-
հատելու հասարակական կեանքի բո-
լոր յեղափոխական ու աշխատաւորա-
կան ուժերը և մի ամբողջական ու աշ-

խատ ու ռազական սոցիալիզմ քարոզելու :
Մարքսն ու մարքսիստները միմիայն
սլոտլետարիատին էին յեղափոխական
ու սոցիալիստական համարում. իսկ
«գիւղացիութիւնը» առհասարակ, նաև
մանր գիւղացիութիւնը մանր-բուրժուա-
կան, յետադիմական ու հակասոցիա-
լիստական յայտարարեցին : Պրոլետա-
րիատի մի բացառիկ պաշտամունք
ստեղծեցին, մանր գիւղացիութիւնը
վտարեցին կամ չեզոքացրին սոցիա-
լիստական շարժումից : Դասակարգային
կուրի այս միակողմանի տեսութեամբ
նրանք սոցիալիզմը դարձրին զուտ սլոտ-
լետարական և թուլացրին սոցիալիստա-
կան շարժումը, միասեցին սոցիալիզմի
ընդհանուր աշխատաւորական մեծ զու-
տին և գործին :

Այդ զուտ սլոտլետարական սոցիա-
լիզմը այժմ հասարակական կեանքի
և գիտական մտքի զարգացմամբ լրաց-

ւում է ընդհանուր աշխատաւորական
սոցիալիզմով: Աշխատաւորական սո-
ցիալիզմը կանգնած է ընդհանուր աշ-
խատաւորութեան դասակարգային կուէի
տեսակէտի վրայ: Նա յենւում է բոլոր
աշխատաւորների վրայ, բոլոր նրանց
վրայ, որոնք ապրում են միմիայն ի-
րենց անձնական աշխատանքով և ուղ-
ղակի թէ անուղղակի կերպով շահա-
գործւում են կապիտալից և կապիտա-
լիստական: հասարակութիւնից: Իբրև
քննաչափ ընդունելով «աշխատանքը»
և ոչ «սեփականութիւնը»՝ աշխատա-
ւորական սոցիալիզմը սոցիալիստական,
աշխատաւոր ու յեղափոխական տարր
է համարում նաև թէ մանր գիւղացի-
ութիւնը և թէ մանր արհեստաւորու-
թիւնը: Սրանք էլ հաւասարապէս շա-
հագրութեամբ են սոցիալիստական կար-
գելով: Որովհետև չսրանց «շահագործումը
միայն իր ձևով է տարբերւում բանւոր-

ների շահագործումից: Թէ սրանց և թէ
սրանց շահագործողը միեմայն բանն է
— կապիտալը» (Կ. Մարքս):

Ահա ամբողջական, դրական կամ
խրական, յեղափոխական և աշխատա-
ւորական ճշմարիտ սոցիալիզմը: Դա
ամբողջական (ինտեգրալ) դրական (պո-
զիտիւ) և յեղափոխական է կոչուում,
որովհետև դա յենուում է հասարակական-
պատմական կեանքի բոլոր իրական
պայմանների, տնտեսական առարկայա-
կան դրուժիւնների—փաստերի և բո-
լոր յեղափոխական ուժերի վրայ: Դա
ընդունում է , չ միայն տնտեսական—
արդիւնագործական, այլ և մարդկային
ու գաղափարային ուժերի յեղափոխա-
կան դերը պատմութեան մէջ: Դա
հասկառակ մի սկողմանի տնտեսական
մատերիալիզմի (մարքսիզմի) առանձ-
նապէս շեշտում է քննադատորէն մը-
տածող և յեղափոխական անհատների

և գաղափար—ուժերի դերը: Մասնա-
ւորապէս մենք ընդունում ենք, որ
գիտակից և յեղափոխական մարդկանց
գործօն ու բարոյական կամքից, քննա-
դատող մտքից, արդարութեան ու ճշ-
մարտութեան համար բաբախող սրտից
և ուրիշի ցաւին կարեկից խղճից է կախ-
ւած Սոցիալիզմի թագաւորութիւնը:
Մեր սոցիալիստական տեսակէտը ամ-
բողջական (ու աշխատաւորական) է
կոչւում և այն տեսակէտից, որ դա
յենւում է, ինչպէս ասացինք, տղջ աշ-
խատաւորութեան և ոչ միայն պրոլե-
տարիատի վրայ:

Ահա այս ճշմարիտ և ամբողջական
սոցիալիզմը միայն կարող է առաջ բե-
րել «սոցիալական», այսինքն սոցիա-
լիստական մեծագոյն յեղափոխութիւնը
և մեզ տանել դէպի սոցիալիզմի թա-
գաւորութիւնը:

Իսկ թե ինչպիսի հասարակութիւն

կլիճի սոցիալիստական նասարակու-
թիւնը, այդ իբրև սուլազայի բան դըժ-
ւար է հիմնկւանից որոշ նկարագրելու
Այժմ միայն դրա ընդհանուր հիմունք-
ներն ու սկզբունքները կարելի է
ընդգծել:

Ամենից առաջ դա կլիճի մի ոչ-դա-
սակարգ ային հասարակութիւն: Դասա-
կարգային, այսինքն սոցիալական և
տնտեսական բոլոր տարրերութիւն-
ները վերացած կլիճին այնտեղ: Իւրա-
քանչիւրը իր աշխատանքի արդիւնքի
լիւ տէրը կլիճի: Մարդիկ կարգիւնա-
գործ են իրենց ընկերների հետ իրենց
սեփական կարիքների համար: Ան-
հատի և հասարակութեան շահերի կա-
տարեալ ներդաշնակութիւն կլիճի: Հա-
սարակական բարեկ'ցութիւնը կլիճի
ամենամեծ սկզբունքը: Անհատի կեանքն
ու աշխատանքը կլիճին կատարելապէս
ապահովւած: Աշխատանքը կլիճի հա-

ճելի ու սուրբ: Սոցիալ/ստական հա-
սարակական կեանքը կղեկավարւի հե-
տեւալ սկզբունքով. — «Սուանց աշխա-
տանքի ոչ մի վայելք, և առանց վայել-
քի ոչ մի աշխատանք» (Բերել):

Այսպիսով միայն ամեն մի անհատ
հնարաւորութիւն կունենայ ներդաշ-
նակ ու բազմակողմանի կերպով զար-
գանալու: Սոցիալիստական հասարա-
կութիւնը կլինի ներդաշնակ զարգա-
ցած անհատների մի ներդաշնակ մի
ութի ն: «Այդ այն միութիւնն է, ուր
իւրաքանչիւր մէկի ազատ զարգացու-
մը պայմանաւորւած է բոլորի ազատ
զարգացմամբ» (Կ. Մարքս): Այդ իս-
կապէս ազատ, հաւասար ու եզրայրա-
ցած մտրդկանց հասարակութիւնը մի-
այն ճիմւում կլինի արդարութեան,
ճշմարտութեան ու բարոյականութեան
վրայ: Մարդը այլ ևս ստրուկ, գործիք,
մեքենայ կամ «լոկ մշշոց» չի լինի:

այլ մի ինքնարժէք բան: Մայրիկ այն-
քան իրաւունքներ կունենան, որքան
պարտականութիւններ, որովհետեւ մի-
այն պարտականութիւնները առանց
իրաւունքների սոռաջ են բերում ստրկու-
թիւն, իսկ իրաւունքներն առանց
պարտականութիւնների տանում են
դէպի բռնութիւն: Իրաւունքների ու
պարտականութեան և աշխատանքի ու
սեփականութեան հաւասարութեան մէջ
է իսկական ազատութիւնը: Եւ ընկե-
րային — ընկերվարական (սոցիալիստա-
կան) կեանքի, աշխատանքի ու վայելքի
մէջ է իսկական եղբայրութիւնը,
սէրն ու խաղաղութիւնը:

Ահա սրան է ձգտում սոցիալիզմը: Բա-
սակարգային տեսակէտի վրայ կանգ-
նելով և դասակարգային կռիւ մղելով
նա որոշ դասակարգի գերիշխանութեան
չէ ձգտում, նեղ-դասակարգային՞ շար-
ժում չէ դառնում: Նրա դասակարգա-

յին կռիւք ուղղւած է դասակարգային դրութեան, դասակարգային անարդար ու անհաւասար հասարակութեան դէմ: Սոցիալիզմը կուռւմ է բոլոր ճնշւածների ու շահագործւողների, ուրեմն ամբողջ մարդկութեան ազատագրութեան համար բոլոր տեսակի շահագործումներից ու ճնշումներից: Սոցիալիստական շարժման, նրա ընդհանուր ազատարար հոսանքի մէջ են միանում նաև ճնշւած ազգերի և թէկնոջ ազատագրութիւնը:

Համաշխարհային պատմութեան գերազոյն բարոյական գաղափարն է Սոցիալիզմը:

Սոցիալիզմ—դա ողջ մարդկութեան դրական և ամբողջական ազատագրութիւնն է:

Սոցիալիզմ—դա նոր, բարոյական, վերածնւած մարդկութիւն ու մարդկայնութիւն (հումանիզմ) է:

Սոցիալիզմ—դա մի նոր առողջ ու
ամբողջ, Եւրոպայնակ կուլտուրա, յա-
ռաջագիմո: Քեան մի վարդազոյն հեռա-
նկար ու գերագոյն իղէալ է:

«Երջանիկ է նա, ում վիճակւած է
ապրելու և սլայքարելու այս գեղեցիկ
իղէալի իրականացման համար»:



- 200 -

ՀՀ Ազգային գրադարան



NL0836118

3

ԱԳՀ
15

Գինն է 15 կոպ.

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

«Աշխատատեղ»-ի գրադարանի գրքոյկները

- 1. Ն. Բրեշկո-Բրեշկովսկայա. — Ինչպէսք է անել Հիմնադիր Ժողովուրդ. . . . 5 կոպ.
- 2. Ն. Ա. Բուրակին. — Հողի սեփականութիւնը և համայնական սեփականութիւնը. 10 կոպ.

Պատրաստուած են տպագրութեան համար մի շարք ուրիշ գրքոյկներ

Գինն՝ Тифлисъ, редакция «Ашхатаворъ», Могнинская ул.